

150 Է. Պարսկահայք՝ յելից Կորճէից, եւ ցա-
ղիտատաբար՝ մտանէ ընդ մէջ Ատրքապատ(ա)կա-
նի² եւ լերինն Տաւրոսի՝ այնր կողման, որ կոչի
Կոհ-ի նիհորական, մինչեւ ցերասիս³ գետ:
151 Ունի գաւառս ինն⁴ զԱլլի, որ կոչի Կուտի-
ճան, զՄարի գաւառ, զԹրաբի գաւառ, զԱլլի-
սի⁵, որ է Ուլէալլի⁶, զԱռնալլի, զՏամբէր⁷, զԶա-
րէհ(ո)ւան⁸, զԶարաւանդ⁹, զՀեր: 152 Ունի յերէ-
ոց զցիւ եւ զայծեամն:

[26ա] 153 Ը. Վասպուրական՝ ի մտից Պարս-
կահայոց եւ առ երի Կորճէից: 154 Ունի գաւառս
երեսուն եւ հինգ¹⁰ զՌշտունիս, որ է ընդ Մոկաց

եւ ծովուն Բ՝[զ]նունեաց¹¹, յորում՝ կղզիք երկու¹²
Ախթամար եւ Արտի, եւ ցամաքակղզին Մանգ-
կերտ. եւ [զ]Տոսպ¹³ յելից Բզնունեաց. զԲողո(ւ)-
նիս¹⁴. զԱրճիշակովիտ¹⁵. [զ]Կուղանովիտ.
[զ]Բառիղովիտ¹⁶. զԴառնի՝ մինչեւ ցգաւառն
Կոգովիտ, որ յոտինն՝ Ազատ Մասեաց. զԱռբե-
րանի¹⁷ յելից ծովուն Բզնունեաց, յորում՝ կղզիք
Զքատան եւ Լիմն, ցամաքակղզին Ամիկ եւ Առես-
տովան¹⁸, ուստի ելանէ ձուկն: 155 Եւ յելից գո-
ցա՝ [զ]Բուժունի¹⁹, զԱռնալլի ոտն²⁰, զԱնձովա-
ցիս²¹, զՏրպատունիս, զԵրուանթունիս²², [զ]Կր-

- 1 VS ցաղիտատաբար փխ ցաղիտատաբար (վեր., Սուրբեանը բառի մօտ հարցական է դրել, բայց Գ. Արքարեանի դիպուկ դիտարկմամբ (ՊԲՀ, 1961, հոմ 1, էջ 185) համեմատություններ սիրող մեր հեղինակը կիրառել է լատիներէն՝ «աղեղ» կամ «մետ» նշանակող sagitta եզրույթը, որը եւ կարող էր վերածուել ցաղիտատաբար-ի՝ «աղեղնաձեւ» իմաստով. տե՛ս բոլորագիր Պ → Գ)
- 2 V Ատրպատականի, S Ատրպատականի փխ Ատրպատականի (վեր., հմմտ. նախ. Ե.115, 247. համաձայնում «առ Ատրպատականի» է)
- 3 Ըստ Երեմեանի ցԱրասխ (որ հաւանական չէ)
- 4 V թ
- 5 VS զԱրիսի, ADEPv Ացուերս [ՄՄՄ մի քանի գրչագիր՝ Այուերս, Ուես, Ըստեա] փխ զԱլլիսի (վեր.՝ համաձայնի հիմքում ենթադրելով *Ալլիսի, որից ծագել են *Ալլիսի → *Ալլ(ո)լէս → Ալլ(ո)լէս → Ացուերս, տե՛ս բոլորագիր աւ → ա, ուշ երկաթագիր Յ → Յ եւ ամկանոն գրությունը Ա → Ա.Յ. հմմտ. ներկայիս Աբրիշիմ լեռնանունն հետ՝ Զարասպ լեռնագագաթից Ուրմիայի լճեզր իջնող սահմանային լեռնաշղթայի վրայ)
- 6 Թերես, վեր-լի է՝ Որմեալլի կամ Ուլլիալլի փխն. Ուլլեա (ADEPv չիք որ է Ուլլեա). տե՛ս ուշ երկաթագիր ՈՐՄԷ → ՈՎԷ կամ ՎԷ → ՎԷ եւ հմմտ. Լէոնտի Մոռվէլու Որէթի լեռան հետ (ՄԷլիքսեթ-Բէկ, Ա, էջ 144-145), որը Թարգամոսի եւ Հայոսի երկրի հր. սահմանն էր, համադրելի՝ Որմի-Ուրմիա եւ Արիսի-Ալլիսի տեղանունների հետ
- 7 VS Տամբէթ, ADEPv Տամբերս փխ [զ]Տամբէր (վեր., տե՛ս ուշ երկաթագիր Բ → Թ. «Զօրանամակ»-ի ու «Գահնամակ»-ի տոհմանունները նման են համաձայնի՝ Տամբերացի եւ Տամբարացի)
- 8 VSDv Զարեհւան, AEP Զարեհւան փխ [զ]Զարեհ(ո)ւան (վեր.՝ ըստ այլ բնագրերի)
- 9 V զգքարաւանդ փխ զԶարաւանդ (վեր. Սուրբեանի՝ ըստ համաձայնի)
- 10 V լէ

- 11 V Բունունեաց փխ Բզնունեաց (վեր. Սուրբեանի՝ ըստ բազմաթիւ այլոց)
- 12 V թ
- 13 V տոստ, S Տոսպ փխ [զ]Տոսպ (վեր.՝ ըստ այլոց. տե՛ս Մանգկերտ – Տոստ. համաձայնում Տոսք է)
- 14 VS զԲողոնիս, AE Բողունիք, DPv Բողունիք փխ զԲողո(ւ)նիս (վեր., ըստ Երեմեանի՝ վեր-լի է Թովմայի Բողունիք ձեւը. տե՛ս բոլորագիր Գ → Պ)
- 15 S զԱրճիշակովիտ փխ զԱրճիշակովիտ (V. նոյն լի-ով է նաեւ համաձայնում)
- 16 VS չիք [զ]Կուղանովիտ. [զ]Բառիղովիտ (վեր.՝ ըստ համաձայնի. տե՛ս զԱրճիշակովիտ ... զԲառիղովիտ. համաձայնում բացակայող Գ նախդիրի վերականգնել ենք ըստ V-ի այլոց եւ հակառակ հերթականությամբ ենք դրել՝ «Բառիղովիտ (Pv Աղովիտ, D Բալախովիտ), Կուղանովիտ (D Կուզանովիտ)», ելնելով իրական աշխարհագրական հերթականությունից (որը հեղինակը վասպուրականը նկարագրելիս յստակ է պահպանում). համաձայնի խմբագիրը յաճախ է հարելուան գաւառանունների տեղերը փոխում, թերեւս՝ զոյգելով ինքնաթելադրությամբ բովում)
- 17 VS զԱռբերան փխ զԱռբերանի (վեր.՝ ըստ համաձայնի. տե՛ս գրչի վրիպեալ վարկածով՝ զԱռբերան ի յելից)
- 18 Սուրբեանի տողատակն է. «Այն է Առեստ աւան»
- 19 VS Բուժունի փխ [զ]Բուժունի (վեր.՝ ըստ այլոց. համաձայնում Բուժունիք եւ Բուժնիք է)
- 20 V զառնո՝ ոտն, S զԱռնո(ւ)-ոտն փխ զԱռնոլլի ոտն (վեր.՝ ըստ համաձայնի. գրիչն էլ է նկատել սխալը եւ օ-ի վրայ դրած կայծակնաձեւ նշանով, փաստօրէն, վերականգնել նախագաղափարի ո-ն)
- 21 Միգուցէ, վերականգնելին համաձայնի Անձաւացիք եւ Անձեւացիք տարբերակներից մէկն է
- 22 V զԵրուանթունիս, S զԵրուանդունիս փխ զԵրուանթունիս (վեր., տե՛ս բոլորագիր եւ → է. թ-ով է նաեւ համաձայնում եւ «Գահնամակ»-ում (Երմանթունի) ու «Զօրանամակ»-ի մի տարբերակում (Երանթունի). Սուրբեանը հետեւել է Թով-